Հավելված N 2
2025 թվականի հունվարի 15-ին կնքված
1032-11003/25-ՍՑ պայմանագրի

**ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ N 1**

1. Ընդհանուր տեղեկատվություն

| | |
|---|---|
| Միջոցառման անվանում | «Տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց ցերեկային խնամքի ծառայություններ» |
| Դրամաշնորհի N | Լոտ 9. Սյունիք – ցերեկային կենտրոն |
| Դրամաշնորհատու կազմակերպություն | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն |
| Դրամաշնորհառու կազմակերպություն | «Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպություն |
| Միջոցառման իրականացման ժամանակահատված | 01.01.2025-31.12.2025թթ. |
| Հաշվետու ժամանակահատված | 01.01.2025-31.03.2025թթ. |
| Ներկայացման օր | 03.04.2025թ. |
| Հաշվետվության պատասխանատու<br>(անուն, ազգանուն, պաշտոն) | Հասմիկ Մանուկյան<br>Թիմ լիդեր |

**2. Բովանդակային հաշվետվություն**

**2.1. Խնդրում ենք թվարկել աշխատանքային պլանով և պայմանագրի թիվ 1 և թիվ 7 հավելվածներով սահմանված միջոցառումների (այսուհետ՝ միջոցառում) շրջանակում կատարման ենթակա գործողությունները հաշվետու ժամանակահատվածի համար:**

Հաշվետու ժամանակահատվածի համար կատարման ենթակա գործողություններն են.
- սոցիալ-հոգեբանական օգնության և իրավաբանական խոհրդատվության տրամադրում,
- ազատ ժամանցի, խմբակների, զբաղվածության, մշակութային միջոցառումների և էքսկուրսիաների կազմակերպում,
- աշխատանքային/արտթերապիայի կազմակերպում,
- կենտրոնում սննդի կազմակերպում,
- այլ ծառայությունների տրամադրում՝ ըստ անհրաժեշտության:

**2.2. Խնդրում ենք նկարագրել միջոցառման առաջընթացն՝ ըստ սահմանված աշխատանքային պլանի (Գանտի աղյուսակ) և միջոցառումների, նշելով՝ Ձեր կողմից իրականացված գործողությունները և ստացված արդյունքները հաշվետու ժամանակահատվածի համար: Որքանով են նշված գործողությունները նպաստել տվյալ միջոցառման խնդիրների/նպատակի իրականացմանը:**

- **Սոցիալ-հոգեբանական օգնության** տրամադրման շրջանակներում սոցիալական աշխատողը անհատական և խմբային աշխատանքների միջոցով հաշվետու ժամանակահատվածում աջակցություն է տրամադրել 40 շահառուի, իրականացվել է շահառուների կարիքների գնահատում և վերագնահատում: Հաշվետու ժամանակահատվածում շահառուների հիմնախնդիրների լուծման նպատակով իրականցվել է 8 ուղղորդում, միջամտություն/միջնորդում այլ կառույցներ:
  Իրավաբանական խորհրդատվության շրջանակներում շահառուներին շարունակական տեղեկատվություն է տրամադրվել՝ իրենց իրավունքների վերաբերյալ:
- **Ազատ ժամանցի կազմակերպման** շրջանակներում հաշվետու ժամանակահատվածում ուսուցողական, ժամանցային, հիշողության ամրապնդմանն ուղղված խաղերի, հեռուստադիտումների և դրանց համապատասխան քննարկումների իրականացման միջոցով ծառայություններ են տրամադրվել ցերեկային կենտրոն հաճախող շահառուներին:
  Կենտրոնում գործել է շահառուների հետաքրքրություններին համապատասխանող 7 խմբակ, որոնց մասնակցել է 36 շահառու.
    - Ջուղագործության խմբակ,
    - ասեղնագործության խմբակ,
    - նկարչություն,
    - ինտերակտիվ խաղ,
    - ընթերցանություն,
    - կինոդիտում,
    - առողջ ապրելակերպի խմբակ:

  Կազմակերպվել է թվով 5 մշակութային միջոցառում, որոնց մասնակցել է 40 շահառու: Իրականացված միջոցառումներն են՝
    - Սուրբ Ծնունդ,
    - Բանակի օր,
    - Սիրո և բարեկամության օր,
    - Կանանց միջազգային օր
    - Մայրենի լեզվի միջազգային օր
- **Աշխատանքային/արտթերապիայի տրամադրման** շրջանակներում Հաշվետու ժամանակահատվածում կազմակերպվել է նկարչաթերապիայի 5 հանդիպում (մասնակիցների թիվ՝ 29 ):

- **Սննդի տրամադրման** շրջանակներում Կենտրոնում յուրաքանչյուր օր սննդային 2 ընդմիջում է կազմակերպվել:

**Խնդրում ենք նշել հաշվետու ժամանակահատվածում մշակված նյութերի համացանցում տեղադրված հղումները՝ առկայության դեպքում (օրենսդրական առաջարկություններ, համառոտագրեր, հաշվետվություններ, մեդիա պրոդուկտներ և այլն)**

Հաշվետու ժամանակահատվածում համացանցում տեղադրվել են հետևյալ նյութերը.

- Մայրենի լեզվի միջազգային օր. (տե՛ս հետևյալ հղմամբ https://www.facebook.com/share/p/1H8tn1PyQB/?mibextid=wwXIfr,
- Սիրո և բարեկամության օրվան նվիրված միջոցառում (տե՛ս հետևյալ հղմամբ https://www.facebook.com/share/p/18rZ4zZGzD/?mibextid=wwXIfr,
- Կանանց տոնին նվիրված գարնանային միջոցառում (տե՛ս հետևյալ հղմամբ https://www.facebook.com/share/p/12GZLdYh9N7/?mibextid=wwXIfr

**2.3. Խնդրում ենք ներկայացնել հաշվետու ժամանակահատվածում քաղած դասերը և/կամ ծագած խնդիրները, որոնք խոչընդոտել են միջոցառման գործողությունների իրականացմանը:**

Հաշվետու ժամանակահատվածում ծրագրի գործողությունների իրականացմանը խոչնդոտող խնդիրներ չեն առաջացել:

**2.4. Խնդրում ենք թվարկել հաջորդ հաշվետու ժամանակահատվածի համար նախատեսված գործողությունները (կցելով նաև շահառուների ցուցակը):**

Հաշվետու ժամանակահատվածում նախատեսվում է շարունակել իրականացվող հետևյալ գործողությունները.

- սոցիալ-հոգեբանական օգնության և իրավաբանական խորհրդատվության տրամադրում,
- ազատ ժամանցի, խմբակների, զբաղվածության, մշակութային միջոցառումների և էքսկուրսիաների կազմակերպում,
- աշխատանքային/արտթերապիայի կազմակերպում,
- կենտրոնում սննդի կազմակերպում,
- այլ ծառայությունների տրամադրում՝ ըստ անհրաժեշտության:

**2.5. Խնդրում ենք նշել, Ձեր կողմից իրականացված այն գործողությունները, որոնք նախատեսված չեն եղել միջոցառման աշխատանքային պլանով, բայց իրականացվել են միջոցառման նպատակին հասնելու համար:**

Հաշվետու ժամանակահատվածում Կապանի սոցիալական աշխատողը մասնակցել է «Սոցիալական աշխատանք» եռամսյա հատուկ մասնագիտության դասընթացներին, նպատակը՝ զարգացնելու գիտելիքները, հմտությունները և կարողությունները, որոնք անհրաժեշտ են սոցիալական աշխատանքի ոլորտում արդյունավետ գործունեության համար:

Ձևաչափ

ԵՌԱՄՍՅԱԿԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպության ցերեկային խնամքի կենտրոնի շահառուներին մատուցված ծառայությունների վերաբերյալ

| հ/հ | Մատուցվող ծառայության անվանումը | Ծառայություն ստացած անձանց թիվը |
|---|---|---|
| 1. | հաշվետու ժամանակահատվածի՝ սկզբում/վերջում շահառուների թվաքանակը | 40/40 |
| 1.1 | այդ թվում՝ կին | 30 |
| 1.2 | այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող անձինք՝ 18-65 տարեկան | 10 |
| 1.2.1 | այդ թվում՝ կին | 5 |
| 1.2.2 | 18-40 տարեկան | 1 |
| 1.2.3 | 40-65 տարեկան | 9 |
| 1.3 | 65 տարեկանից բարձր | 30 |
| 2. | մեկանգամյա սննդի տրամադրում | 40 |
| 3. | Կարիքի գնահատում (միայն ցերեկային կենտրոնի պարագայում) | 29 |
| 4. | Աշխատանքային/արտթերապիայի որոշակի տեսակների կազմակերպում (միայն ցերեկային կենտրոնի պարագայում) | 39 |
| 5. | Խմբակների կազմակերպում (միայն ցերեկային կենտրոնի պարագայում) | 36 |
| 5.1 | առողջ ապրելակերպ | 29 |
| 5.2 | ջուղագործության խմբակ | 19 |
| 5.3 | ասեղնագործության խմբակ | 6 |
| 5.4 | նկարչության խմբակ | 20 |
| 5.5 | Ընթերցանության խմբակ | 17 |
| 5.6 | Ինտերակտիվ խաղերի խմբակ | 29 |
| 5.7 | Կինոդիտում | 25 |
| 6. | Մշակութային միջոցառումների կազմակերպում (միայն ցերեկային կենտրոնի պարագայում) | 40 |
| 6.1 | Այդ թվում՝ կենտրոնից դուրս | - |
| 7. | Այլ ծառայություն (նշել) | - |

Կազմակերպության ղեկավար *Երվանդ Մխիթարյան* «03» 04.2025թ

(ստորագրություն, անուն,ազգանուն)